ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

• ՀՀ, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60)71-00-79, 71-00-78, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 252 «__30____»___01______2025 թ.

# Արձանագրություն N 252

## ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հարցման կարգով գիտական խորհրդի 2025թ-ի հունվարի 30-ի նիստի

1. Հայցորդների ատեստավորման հարցը / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
3. Ասպիրանտի գիտական ուսումնասիրության թեմայի վերաձևակերպում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
4. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի ներկա և հեռակա բաժինների ավարտական աշխատանքների վերնագրերի և գիտական ղեկավարների հաստատում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
5. Ընթացիկ հարցեր:

### Խորհուրդը որոշեց.

1. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության և Քաղաքագիտության ամբիոնների հայցորդներին ատեստավորել:

Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ **Մելինե Սամվելի Գևորգյանին** չատեստավորել տարեկան հաշվետվություն չներկայացնելու պատճառով:

2. ա/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ **Խոսրովիկ Լևոնի Սեդրակի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Համապարփակ անվտանգության ռազմավարությունը ՀՀ դիմակայության բարելավման պայմաններում», ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել **ք.գ.դ. պրոֆեսոր Աշոտ Փայլակի Ենգոյանին**:
3. Քաղաքագիտության ամբիոնի 2022թ. առկա ուսուցման ասպիրանտ **Մարտին Արմանի Աղաջանյանի** թեկնածուական ատենախոսության նախկին թեման՝ «Տեղական ինքնակառավարման համակարգի արդիականացումը ՀՀ կայուն զարգացման գործոնը», վերաձևակերպել հետևյալ կերպ՝ **«Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք» ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ:
4. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի ներկա և հեռակա բաժինների ավարտական աշխատանքների վերնագրերը և գիտական ղեկավարներին հաստատել:

*Գիտական խորհրդի նախագահ* *Տ. Եփրեմյան*

*Գիտական խորհրդի քարտուղար* *Գ.Բալասանյան*